կանի կինը բերել է մեռած երեխա կամ ծնված երեխաները չեն ապրում կամ հիվանդանում են՝ համոզված էին, որ այդ առաջ է գալիս նրանից, որ ամուսինը սպանել է հղի կենդանուն կամ ձագերին և որբացրել՝ սպանելով մայրերին։ Արգելվում էր շատ որս սպանելը։ Դա նույնպես մեղք էր համարվում. այդպիսի մարդու տանը բախտավորություն չի լինի[63]։ Այստեղ կրկին երևան է գալիս այն հավատը, որ կենդանիների պաշտպան ոգիներն են միջամտում և պատժում նրան, ով ձագին է որբացրել կամ անխիղճ կերպով իր հարկավորությունից ավելի որս է սպանել։

Որսի ժամանակ դիմում էին մի քանի խորամանկ միջոցների։ Այսպես՝ կաքավ որսալիս թաք էին կենում դավլայի ետև և այնպես երամին մոտենում։ Դավլա–ն փայտե քառանկյունի բարձր շրջանակի վրա կտավ քաշած վահան է, որի վրա կարված են բազմերանգ խայտաբղետ կտորիկներ։ Որսորդն այդ վահանն առջևը բռնած և նրա ետևը ծածկված՝ կամացուկ մոտենում է կաքավներին, որոնք շշմած նայում են այդ տարօրինակ էակին և թույլ են տալիս որսորդին շատ մոտենալ։ Վահանի կենտրոնում եղած ծակից անց է կացվում հրացան։ Այդ ծակով որսորդը կանոնավորում է իր հրացանի ուղղությունը։

Զանգեզուրումն էլ շատ էր տարածված հորի կամ թակարդի միջոցով աղվես, դալա, գայլ և այլն բռնելը։ Հորը ճյուղերով և տերևներով քողարկում են, վրան կերակուր դնում, կենդանուն հրապուրելու և հորը գցելու համար։ Հորի վրա կամ առանձին դնում են թակարդը՝ ղափանգը, որը բավականին բարդ կազմություն ունի։ Կաշու կտորի վրա կարում են մի երկաթե կիսօղակ, որի վրա զսպանակով միացվում է մի այլ կիսօղակ այնպես, որ եթե կենդանին ուզենա վերցնել զսպանակի վրա ամրացրած միսը, դմակը կամ մի այլ կերակուր, երկրորդ կիսօղակն իսկույն կշրջվի՝ կփակվի ու ամուր կբռնի նրա ոտը, պոչը կամ վիզը։

Եթե որսը կատարվել է ընկերությամբ, որսացածը հավասարապես բաժանվում էր բոլոր մասնակիցների մեջ, միայն խփողին տալիս էին որպես ավելորդ բաժին նաև բուրդը, երբեմն և գլուխը։ Որսը տուն էին տանում մութնով, որ ոչ ոք չտեսնի, որովհետև պահանջվում էր, որ պատահողին որսից բաժին հանեն կամ, ինչպես բացատրում էին Բեխում, գյուղում շար կանայք շատ են լինում, նրանք կարող էին աչք տալ ապագա որսին։ Տուն վերադառնալիս՝ որսորդը բաժին էր հանում և հարևաններին։ Այս սովորության մեջ ազգագրագետները տեսնում են նախնական կոմունիզմի հետքերը[64], երբ որսը համարվում էր համայնքի սեփականություն և բաժանվում էր համայնքի անդամների միջև, թեկուզ նրանք մասնակցած չլինեին որսորդությանը։ Դր. Ա. Մ. Դիրրը[65], զարգացնելով այս բացատրությունը, ենթադրում է, որ նախնական ժամանակներում որսորդությունն ամբողջ տոհմի՝ թոխումի գործ է եղել և պիտի կարծել, որ որսում էին միայն իրենց խնամակալ կենդանուն, այսինքն՝ իրենց նախահայր համարվող կենդանուն, իրենց տոտեմին։ Դրանով կապացուցվեր նաև «կովկասցի թոխումնէրի տոտեմական ծագում ունենալը»։ Բայց այստեղի բացատրությունը թվում է ինձ պիտի որոնել նախնական մտածողության մեջ ևս։ Եթե որսը ծածուկ էր բերվում գիշերը, ծածուկ նաև հա-

---

63 СМОМПК, вып. XVII, отд. II, էջ 195, 200։

64 **Чурсин Г. Ф.**, Армяне Зангезура, Тифлис, 1931, էջ 232։

65 **Дирр. А. М.**, Божество охоты и охотничий язык у кавказцев, СМОМПК, вып. XXXIV, отд. IV, էջ 1—16.